

կայ մնայ և անգործութեան դատապարտուիլ: Սակայն ի պահանջել հարկին կրկին գործան վիճակի մէջ կը մանեն:

Արդէն ժուժկայութիւնը մինչև շափահասութիւն ընտեսական երեսոյթ մըն է: Անկէ անդին երկար ատեն ժուժկայ մնալով մարդ իր կարողութիւնը ընտւ շի կորսնցնէր:

Միայն թէ ժուժկայութիւն ըսելով միմիայն սեռային մերձեցումէ հետո մնայ հասկնալու չենք: Ժուժկայութիւնը կատարեալ ըլլալու է: Մտքով, զգացումով և գործքով ժուժկայութիւնն է կատարեալ ժուժկայութիւնը:

Անտեղի գրգռութիւններ, ասանց սեռային գոհացումի սիրարանութիւններ, երեսակայութեան թոխշք տալով մտային զիջութիւն, ասանք մշտսակար են սեռային կարողութեան անսակէտով:

Բացառարար կան այնպիսի անհատներ որոնց համար երկարատե ժուժկայութիւնը մշտսակար կրնայ ըլլալ: Այսպիսիներուն ամուսնութիւն կը թելադրենք:

Մանաւանդ ամուսնացած անհատներ որոնք վարժուած են սեռային կեանքին երկար ատեն ժուժկայ մնալու չեն:

Ժուժկայ մնալու համար զեղ ու զարմանք օգուտ չունի: Կամք ընելով, Ֆիդիբական և հոգեկան գրադում մը գտնելով սեկ մարդ կորոյ է երկար ատեն ժուժկայ մնալ, ասանց մշտսուելու:

Իսկապէս այժմէական խնդիր մըն է, ժուժկայութեան հարցը մեր ցիր ու ցան երիտասարդներուն համար: Երիտասարդներ, եթէ ժուժկայ ապրելու շափ կամքի գորութիւն չունիք ջանացէք մշակել այդ կամքը: Լծուեցէք Ֆիդիբական և մտային աշխատանքի: Հետո կեցէք զրոյսի: տեսարաններէ: Ամուսնացէք եթէ կրնաք յարմար թեկնածուներ գտնել: Սակայն, մի՛, մի՛ հատտաք ժուժկայութեան գէժ խրատ տուողներուն:

Արդհետև կուժը ջրի ճամբուն վրայ կը կտարի: Վեներական ախտերուն ճանկին մէջ ինչպէն շատ աւելի լաւ է ժուժկալ ապրիր:

ԲԺ. Ա. ԱԲԷԼԵԱՆ

(Պոստքն)

ՆԱԽԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԲԺՇԿ. ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԱՒՍՏՐԻՈՑ ՄԷՋ.— ՎԻԷՆՆԱՅԻ ՄԷՋ քացուած է բժշկական խորհրդակցութեանց քաղաքային Գրասնեակ մը, նոր ամուսնացողներու հիմար, քննութիւնները ձրի են եւ կամաւոր: Ամուսնութեան թեկնածուներուն, Գրասնեակը կուտայ տեսրակի ձեւով խորհուրդներ, այսպէս.— Ամուսններու անողջութիւնը ակելի անհրաժեշտ է քան զբամբ:— Երբ ամուսնացողներէն մէկը հիւանդ է, իր հիւանդութիւնը կը փոխանցէ ընկերոյը:— Շիւանդ ամուսնը, չկարենալով աշխատիլ, կը ստիպէ իր ընկերը աշխատելու, այսպէսով տան հոգերը կ'աւելնան, եւայն:

Պրուսիոյ Ազգ. Խնամատարութիւնն ալ կը խորհի նման գրասնեակներ քանալ: